ԵԴ/33408/02/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

18 նոյեմբերի 2022 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով ըստ դիմումի Գագիկ Բարսեղյանի՝ փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին քաղաքացիական գործով ընդդատության մասին վեճը լուծելու համար այն Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Գագիկ Բարսեղյանը 2022 թվականի հունիսի 30-ին դիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ դիմումն ընդունվել է վարույթ:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ ընդդատության հանձնվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

4. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ, գործի տարածքային ընդդատությունը որոշելու համար այն ուղարկվել է Վճռաբեկ դատարանի նախագահին:

5. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի նոյեմբերի 14-ին:

<u>Ընդդատության մասին վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. 2022 թվականի հունիսի 30-ին դիմելով դատարան՝ Գագիկ Բարսեղյանը պահանջել է փաստացի տիրապետման հիմքով իրեն ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ իր հոր՝ Գուրգեն Մարգարյանի և խորթ մոր՝ Ոսկինար Ղարիբյանի ժառանգական զանգվածի նկատմամբ[1]:

7. Դիմումին կից ներկայացված՝ անձնագրի պատճենի համաձայն, Գագիկ Բարսեղյանի հաշվառման հասցեն է՝ քաղաք Երևան, Ֆուչիկի 1-ին նրբանցք, 9-րդ շենք, բնակարան 18[2]:

8. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ և 238-րդ հոդվածներին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ ընդդատության ուղարկել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ հետևյալ հիմնավորմամբ. *«[Վ]եճը վերաբերում է ՀՀ, Վայոց Ձորի մարզում գտնվող անշարժ գույքին: (…) [Ուստի] դատարանը գտնում*

---

[1] Տե՛ս քաղաքացիական գործը, թերթեր 3-5:
[2] Տե՛ս քաղաքացիական գործը, թերթ 8:

է, որ գործը պետք է հանձնել Վայոց Ձորի մարզի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը»[3]:

9. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ, 24-րդ և 238-րդ հոդվածներին՝ 2022 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քաղաքացիական գործի ընդդատությունը որոշելու համար այն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով հետևյալը. *«(…) [Դ]ատարանի կողմից հաստատման ենթակա իրավաբանական նշանակություն ունեցող փաստը վերաբերում է ժառանգությունն ընդունելու հատուկ վարույթին, ուստի դրա նկատմամբ տարածվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 238-րդ հոդվածով սահմանված ընդդատության ընդհանուր կանոնը, այն է՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ գործերը քննվում են դիմողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակվելու վայրի դատարանում: Դատարանն արձանագրում է, որ դատարան ներկայացրած դիմումում որպես Գագիկ Գուրգենի Բարսեղյանի հաշվառման վայրի հասցե նշվել է ՀՀ, ք.Երևան, Աջափնյակ 1 նրբանցքի 9 շենքի թիվ 18 բնակարան հասցեն, անձնագրի պատճենի համաձայն՝ ք.Երևան, Ֆուչիկի 1 նրբանցքի 9 շենքի 18 բնակարան հասցեն, որը չի գտնվում ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի տարածքում՝ Դատարանի դատական տարածքում: Հետևաբար, չնայած այն հանգամանքին, որ գույքերը, որոնք, ըստ դիմողի, գտնվում են ՀՀ Վայոց ձորի մարզում, այսինքն՝ Դատարանի դատական տարածքում, այնուամենայնիվ դիմողի հաշվառման վայր ունենալու, փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի ներկայացված լինելու դեպքում գործը պետք է քննվի դիմողի հաշվառման վայրի դատարանում (…)»*[4]:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

---

[3] Տե՛ս քաղաքացիական գործը, թերթ 42:
[4] Տե՛ս քաղաքացիական գործը, թերթեր 47-49:

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ/33408/02/22 քաղաքացիական գործը՝ ըստ դիմումի Գագիկ Բարսեղյանի՝ փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին, ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:*

11. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ *«Հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով»:*

12. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը, գործերի տարածքային ընդդատությանը համապատասխան, հաստատում է այն փաստերը, որոնցից կախված է քաղաքացիների կամ իրավաբանական անձանց անձնական կամ գույքային իրավունքների ծագումը, փոփոխումը կամ դադարումը»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը փաստերի հաստատման վերաբերյալ քննում է այն գործերը, որոնք վերաբերում են՝ (…) 5) ժառանգությունն ընդունելուն և ժառանգության բացման վայրին. (…) 8) սեփականության իրավունքով գույքի տիրապետմանը. (…)»:*

13. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 238-րդ հոդվածի համաձայն՝ *«Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ գործերը քննվում են դիմողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակվելու վայրի դատարանում, բացառությամբ անշարժ գույքը սեփականության իրավունքով տիրապետելու փաստը հաստատելու վերաբերյալ գործերի, որոնք քննվում են անշարժ գույքի գտնվելու վայրի դատարանում»:*

14. Նախորդ կետերում վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված՝ ընդհանուր տարածքային ընդդատության կանոնի համաձայն, հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի դատարան: Հայցադիմումը վարույթ ընդունելիս, ի թիվս այլ հանգամանքների, դատարանը պետք է պարզի՝ արդյոք ներկայացված հայցադիմումում պահպանվել են օրենսգրքով սահմանված տարածքային ընդդատության կանոնները, և միայն այդպիսիք պահպանված լինելու դեպքում, որոշում կայացնի հայցադիմումը վարույթ ընդունելու մասին:

Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանում է, որ դատարանը, գործերի տարածքային ընդդատությանը համապատասխան, հաստատում է այն փաստերը, որոնցից կախված է քաղաքացիների կամ իրավաբանական անձանց անձնական կամ գույքային իրավունքների ծագումը, փոփոխումը կամ դադարումը: Ընդ որում, դատարանը, ի թիվս այլնի, փաստերի հաստատման վերաբերյալ քննում է նաև այն գործերը, որոնք վերաբերում են ինչպես ժառանգությունն ընդունելուն և ժառանգության բացման վայրին, այնպես էլ սեփականության իրավունքով գույքի տիրապետմանը: Հարկ է նկատել, որ թեև այս երկու վարույթներն էլ ընդգրկված են իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման հատուկ վարույթների մեջ, այդուհանդերձ, օրենսդիրը տարբերակել է նշված երկու վարույթները՝ միաժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 238-րդ հոդվածում սահմանելով, որ անշարժ գույքը սեփականության իրավունքով տիրապետելու փաստը հաստատելու վերաբերյալ գործերը քննվում են անշարժ գույքի գտնվելու վայրի դատարանում, իսկ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ մյուս գործերը՝ դիմողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակվելու վայրի դատարանում:

Վերոգրյալից բխում է, որ բացառությամբ անշարժ գույքը սեփականության իրավունքով տիրապետելու փաստը հաստատելու վերաբերյալ գործերի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի 2-րդ մասում նշված՝ փաստերի հաստատման վերաբերյալ մյուս բոլոր գործերը, այդ թվում՝

ժառանգությունն ընդունելուն և ժառանգության բացման վայրին վերաբերող, քննվում են դիմողի հաշվառման (գտնվելու) վայրի դատարանում:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ՝

- 2022 թվականի հունիսի 30-ին դիմելով դատարան՝ Գագիկ Բարսեղյանը պահանջել է փաստացի տիրապետման հիմքով իրեն ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ իր հոր՝ Գուրգեն Մարգարյանի և խորթ մոր՝ Ոսկինար Ղարիբյանի ողջ ժառանգական զանգվածի նկատմամբ[5],

- 2022 թվականի հուլիսի 11-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում[6],

- դիմումին կից ներկայացված՝ անձնագրի պատճենի համաձայն, Գագիկ Բարսեղյանի հաշվառման հասցեն է՝ քաղաք Երևան, Ֆուչիկի 1-ին նրբանցք, 9-րդ շենք, բնակարան 18[7],

- հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ և 238-րդ հոդվածներին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ ընդդատության ուղարկել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նշելով, որ սույն գործով վեճը վերաբերում է ՀՀ Վայոց Ձորի մարզում գտնվող անշարժ գույքին, հետևաբար գործը պետք է հանձնել Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը[8],

- հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ, 24-րդ և 238-րդ հոդվածներին՝ 2022 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քաղաքացիական գործի տարածքային ընդդատությունը որոշելու համար, այն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով, որ սույն պարագայում ներկայացվել է փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած

---

[5] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[6] Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

ժառանգ ճանաչելու պահանջ, որը նույնական չէ սեփականության իրավունքի ճանաչման պահանջի հետ: Այսինքն՝ դատարանի կողմից հաստատման ենթակա իրավաբանական նշանակություն ունեցող փաստը վերաբերում է ժառանգությունն ընդունելու հատուկ վարույթին, ուստի դրա նկատմամբ տարածվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 238-րդ հոդվածով սահմանված ընդդատության ընդհանուր կանոնը, այն է՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ գործերը քննվում են դիմողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակվելու վայրի դատարանում: Դատարանն արձանագրել է, որ ներկայացրած դիմումում որպես Գագիկ Բարսեղյանի հաշվառման վայրի հասցե նշվել է՝ ՀՀ, քաղաք Երևան, Աջափնյակ 1-ին նրբանցքի 9-րդ շենքի թիվ 18 բնակարանը, անձնագրի պատճենի համաձայն՝ քաղաք Երևան, Ֆուչիկի 1-ին նրբանցքի 9-րդ շենքի թիվ 18 բնակարանը, որը չի գտնվում Արարատի և Վայոց ձորի մարզերի տարածքում: Հետևաբար, ըստ դատարանի՝ փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի ներկայացված լինելու դեպքում, գործը պետք է քննվի դիմողի հաշվառման վայրի դատարանում[9]:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ սույն գործով Գ.Բարսեղյանի կողմից ներկայացվել է փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջ, որը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 238-րդ հոդվածի իրավակարգավորումներից ելնելով, ենթակա է քննության դիմողի հաշվառման (գտնվելու) վայրի դատարանում: Նկատի ունենալով, որ դիմողի անձնագրի պատճենի համաձայն՝ վերջինս հաշվառված է քաղաք Երևան, Ֆուչիկի 1-ին նրբանցք, 9-րդ շենք, բնակարան 18 հասցեում, գտնում եմ, որ թիվ ԵԴ/33408/02/22 քաղաքացիական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

---

[9] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

Հետևաբար, Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ/33408/02/22 քաղաքացիական գործը՝ ըստ դիմումի Գագիկ Բարսեղյանի՝ փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի վերաբերյալ ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր է:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ԵԴ/33408/02/22 քաղաքացիական գործը՝ ըստ դիմումի Գագիկ Բարսեղյանի՝ փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին, ընդդատյա է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ